

գիտութիւնն ալ զուգեցին, որք արդէն անբաժան պէտք է ըլլան, ինչպէս լոյսն՝ արեւէն, կրօնքն պաշտօնէի մը վրայ: Աղքատներն ինքնին ճշմարիտ գիտուն մ'է և խոր հմտութիւն ունի ազգային պատմութեան և աշխարհագրութեան մէջ. բայց իր քննութեանց առանձին առարկայ ըրած է Փոքր Հայքը, յորում և ինքն ծնած է: Պօրտը թերթերուն մէջ արդէն կեղծ սատրագրութեամբ՝ շարք մը կարեւոր յօդուածներ հրատարակելէն զատ, ունի բազմաթիւ անտիպ գրութիւններ, զորս առանձինն տպագրել տալու մտապիւր է. մենք անհամբեր կը սպասենք մանաւանդ արաբացի աղբիւրներէ քաղածին, որք ամենուն զիրամատչելի հեղինակներ չեն: Երջանիկ յիշողութեամբ մը օժտուած, Աղքատներն անցեալ դարու առաջին քառորդէն մինչեւ ներկայ ժամանակ՝ Հայոց թէ՛ եկեղեցական և թէ՛ քաղաքական ղեպքերուն ալ կենդանի պատմագրութիւնն է: Իր խօսակցութիւնը, (զոր հանճարաբանութիւնը յանկուցիչ կ'ընեն, և իր հմտութիւնը) շահեկան և հաճոյական ընթերցման մի կը համապատասխանէ թողած տպագրութեամբը:


Երկայնապէս Զմեաթի վանքին մէջ զբտնուող քահանաներէն ճանչնալու պատիւ ունեցայ Տէր Ռաֆայէլը, Աստանայի քարոզիչ, Տէր Յովհանն, վարժապետ աստուածաբանութեան, և Տէր Մկրտիչ Մուրառեանը, վերակացու աղայոց, զոր արդէն ուրիշ տնօրէն արի ատը ճանչցած էի՝ երբ Արեւիկը կը դառնար Գերմանիայէն, ուր կատարած է իր ուսմանց ընթացքը:

Մեղամաղձութիւնը՝ զոր վանքին բանի մը սրահները կ'ազգեն՝ կը փարատի, զուարթութեան կը փոխուի, երբ կը գիտենք շէնքին առջեւ գտնուող սափարակ տանիքի վրայէն պարզուած աստարանը: Հեռուն Միջերկրականը՝ երբեմն նոսր մշուշով պատած և երբեմն իւր երեսին վրայ վէտ վէտ խաղացող ժպիտներով փայլիլուն. աջակողմից ժայռի և քարի ամբաւութեան մէջ, որ լուսութիւնը կ'անձնաւորեն, խումբ մը ծառեր քեզի հետ կը խօսին. ձախակողմից անդուպ մը որ ձայնիդ կը սպասէ արձագանգով մի զայն

քեզի պարձնելու համար. հարաւակողմից Լիբանանու ուրիշ բարձունքներու վրայ գիւլեր և գեղեցիկ պալատներ, որոց ճրագունք գիշեր աստն աստղերուն հետ խառնուելով վարէն նայող անփորձ աստղաբաշխ մը պիտի շփոթցնէլին և նոր համաստեղութիւններ գտնելու պատրանքը պիտի տային անոր: Այդպիսի երեկոյ մը՝ այդ տանիքին վրայ պատիւ և բախտ ունեցայ խօսակցելու բարձրաստիճան անձի մը հետ, նախկին կաթողիկոսական — պատր. փոխանորդ, Գերպ. Աւետիս Արքիարեան արքեպիսկոպոսին, որ բանի մ'ամիսներէ ի վեր Զմեաթ կը բնակի:

Մեր խորին շնորհակալութիւնը մատուցանելով վանքին մէջ գտնուող ազնիւ վարդապետաց, սրտազին կը մաղթենք Գերպ. Աղքատներնին իր Յօրեւանին առթիւ, որ այդ բազմարկուն Միարանութիւնը դեռ շատ տարիներ փայլի իւր իմաստուն առաջնորդութեան ներքեւ, իրեն ծարիւղատ գալուստ մը և պողպատի արուն մը, ի վարձ քրտնաջան Առաջնորդին և ի վայելումն Ազգիս:

Հ. Յ. Ա.



Ս. Պ Ր Ո Ց

տարակուսակամ բառի մը ըմթերցումը

Աս Պ. Ստեփան Տերտերեան

Կ'առաջարկէք Ս. Գրոց (Գ. Մակար. Ա. Ծ) տարակուսական մա ծովայրը մա տոկայրը կարգաւու կամ ուղղելու: Զուգարկիութեան մէջ կ'ընչ անցեալ տարի (1904), նոյնպէս Գեկու. մէջ, խոտորչուուն եկեղեցական մը այդ մա ծովայրը (և ոչ թէ մա ծովայր, ինչպէս դուք կը գրէք) կը փոփոքեր մա ժուժայր տեսնել: Սակայն բառական է բաղադրել այդ համար յոյն բնագրին հետ (սուրբ թարգմանուած է), հաստատելու համար՝ որ ոչ մա տոկայր և ոչ մա ծովայր մեկնութեանց հարկ մը կայ, այլ ուղիւ կարգաւու համար՝ բառական և նետուել վերոյիշեալ Գրքին նոյն համարի (տպ. Բարք.) ձանթութեան մէջ յիշուած երկու ձեռագիր օրինակաց, և ուղղել նա սակայն յոյն թուրքական (σδδαραμδς ηδδολατο πειδεδατα): — Թե՛ ինչպէս սակայնը տպու գրիչներէ Ծովայր և կամ ծովայրի փոխուել է՝ կարեմ ջննութեան նիւթ ընել շարժեր, թէ և անհասանելի չէ տեսնուի Արեւ Ուի փոխուելը և մաշած նի մը ստորին գլխին՝ ըր վերին գլխին հետ շփոթուելը, եթէ շտուանք որ ոչ ամեն կայրեն զբարգործներ՝ կայրեն լաւ կարգաւ գիտէին: — Ա՛նք զատ, տոկայր կամ ժուժայր՝ տեղադրելու մասուն ալ չի յարմարի, զի ուր բառերը գրկավոր մը համարէպ հասկերիլու գաղափար կ'ենթադրեն, մինչդեռ հոս տղի շտալու կամ յամառութեամ մը վրայ և հասը:

Հ. Ա. Տ.